

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և ուրիշ օրերէն):

Փայտարարութիւնը ընդունւում է ամեն լիզուով:

Փայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր լառին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ“ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿԻՐ

ՆԵՐԿԱՑ 1887 ԹԻՒՆ

Այս հրատարակվող Թիֆլիսում, նոյն գիրքով և նոյն պրոգրամայով: Մեր կը ստանանք սեփական
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ:
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարվանը 6 ռուբլ:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների ան-
կիւնում, Թամարայի տանը):
Կայսերական ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հաս-
ցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Գիւղացու վիճակը. — Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կա-
նաչ քաղաքում կրթութիւնը ֆարսիստում. Ար-
տաքին լուրեր. — ԽՍՈՒՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.
— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գըն-
չունք.

ԳԻՒՂԱՅՈՒՎ ԿԻՃԱԿԸ

«Մշակ» № 7-ի մէջ մեր տպված ա-
ռաջագործող յօդուածում մենք ասում էինք.
«Գիւղական տարրի մասին, որպէս խո-
րագէտ, տնտես, հաշուող, քաղաքագէտ,
հեռատես տարրի մասին խօսել անհնարին
է: Նոյն իսկ այն պատճառով գիւղացին
այդ բոլոր լաւ յատկութիւնները ունենալ
չէ կարող, որ նա ապրում է, — եթէ այս-
պէս կարելի է ասել» օրից օր, և շատ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՆՁՈՒՆԵՐ

(Մի քանի խօսք անդրադարձանք գնչուների բու-
շանքի և դարաւ չինքերի բարբառի առի-
թով)

Մեր խորագրով լայն տեսակ սրբօրէն Գ. Պ.
Պատկանանի ուսուցիչն ուր երկարութիւնը
Այդ գիրքը նշանագրված է ներկայ ընթացիկ
Թաւանով: Բացի բոլորների և դարձանք հա-
ցից պատկանելի հեղինակը իր այս հետազոտու-
թեան մէջ շօշափում է նաև դանադան երկիրնե-
րում գտնված գնչուների բարբառների նոյննա-
թեան հարցը: Բայց յայդման, կանգն է առնում նա
մի այլ ևս խնդրի վրա, որը մինչև այժմ զբաղեց-
նում է գիտնականներին և որը սակայն վճռված
չէ, այն է՝ գնչուները Հնդկաստանի մի ազգի
հետ ունեն լեզուագիտական մոտադոյն ազգա-
ցութիւն. ուրիշ խօսքով՝ Հնդկաստանում այժմ
բնակեցեալ մի ազգից կարող էին ծագել գնչու-
ները:

Վերջին խնդրի նկատմամբ մեր հեղինակը
դիտարկումներին յատուկ զգուշութեամբ է միջ-
այլոց կրկնում է Նիքոլայի հետեւեալ խօսքերը.
«այն բարբառները, որով խօսում են Հնդկաս-
տանից — ծովից սկսած մինչև Հիմալայի ձիւնա-
բանդները — երկրի բնակիչները վստող ցեղերը
գնչուներին հետ ունեն մի յայտնի և ոչ հրեց չը
բացատրված ցեղական նմանութիւն: Եւ չեմ կա-
րող այժմ մատնացող անել այս կամ այն ցեղը
ու պնդել թէ՛ ահա նա, որը ի դոյն է ամէլ գնչու-
ներին, բայց սակայն իմ դիտողութիւնները համո-
զում են ինձ, որ այդ օտարոտի ցեղը իր ծագումն

անգամ այս կամ այն նշանաւոր (կաւայ-
նեք) իրան համար մնաստակար և փոխա-
ւոր) քայլն անում է ոչ թէ հեռատեսու-
թեամբ հաշուելով իր արածը, այլ որովհե-
տեւ այս կամ այն առօրեայ հանգամանքը
նրան այս րօպէին ներում է:

Բացատրելը մեր ստածը: Գիւղացու
խրճիթը իսպառ քայքայվել է, — հարկաւոր
է նրան վերանորոգել. գիւղացին մարդու է
տալիս իր աղջկան, — նրան առ ձեռն դը-
րամ է հարկաւոր թէ հարսանիքի պատ-
րաստութիւնները տեսնելու, թէ պահան-
ջող փեսացուն պատրաստ դուրսը տալու.
Գիւղացու ընտանիքի մի անդամ երկարա-
տեւ հիւանդութեան մէջ ընկած լինելով —
նա համար արտակարգ ծախս է քաշում
համ էլ այդ երկարատեւ հիւանդութեան
ժամանակ զրկվում է իր համար անհրա-
ժեշտ աշխատող ոյժերի միւնից. գիւղացին
զրկվել է անասունների մէջ տարածված
տարափոխիկ հիւանդութեան պատճառով

ստացել է ոչ թէ մէկ, այլ բազում ցեղերից, որը
յօրինում են մարդկութեան մի մեծ դերասան,
որ բնակվում է Հնդկոսի ամբողջում, կամ նրա մե-
ծախայ վայրերում:

Արդարեւ օտարոտի աղբ. աղբ՝ առանց կրօնի,
առանց հայրենիքի, առանց օրէնքների: Չը տիրե-
լով ամբողջ աշխարհում մի կտոր հողին անգամ,
նա ամենուրեք համարում է իրան իր տանը: Ան-
տաքին գէյի քաղաքների հարստութիւնները,
հոյսութիւններն ու յարմարութիւնները, նա մի-
այն մի քան է ինդուս — Թոյսութիւն սպաս
ապրել բնութեան հետ միասին, հեռի մարդկանց
բնակարաններից, ապրել իր վրանների ու խրճիթ-
ների աղբաւորի հովիտների տակ, որը այնքան
զուլմարար են պաշտպանում նրան որպէս ձմե-
ռային թափանցող ցրտից, նոյնպէս և ամառային
կիլիւն սոթից...

Մեք դադարող այս երկարութեան առաջին
պիտու դերադոն հեղինակը բաւական ընդար-
ձակօրէն պատմում է Եւրօպայում կրած գնչու-
նի աղէտները: Հինգ հարկի տարի առաջ զալիս
են սրանք Եւրօպայ, և չը նայելով այդ աղէտնե-
րին, մնում են այստեղ ընդմիջաւ Չը կարողացան
վանելու գնչուին այստեղից ոչ պատմիւն և ոչ
հայաձայնները: Նա դալիս է այստեղ առանց մի-
որ և է աշխարհակալութեան նպատակների,
բայց և այնպէս՝ չը հպատակեցաւ նա ոչ որին:
Նա մնաց այն, ինչ որ էր. միշտ թափառակա-
նի լայնութեայ, միշտ գող, միշտ յալալաւակի:
Բնակարութեան այդ յատկանիւնը ծննդնում են առ-
նա մի կողմից բնակաց աղբաւորները և ասու-
նութիւնը, միւս կողմից պետութեան հալածանք-
ներն ու նրանց գործ դրած խտտալին միջոցները:
Ոչ կախազան, ոչ տապար, ոչ կրակ և ոչ այլ
սարսափելի ներդութիւններ չը կարողացան իրա-
կանացիել այն պահանջները, որոնց հանդիմա-
նութեամբ տէրութիւնները այսպիսի դաժան մի-
ջոցներին էին դիմում...

Այնքան տանջանքների առաջ, որոնց կրել է

իր տաւարից, իր եղներից, — նրան անմի-
ջապէս փող է հարկաւոր ստակածների
տեղ նոր եղներ առնելու. միւրապէս գիւ-
ղացին պէտք է հարկերը վճարի իր խըր-
ճիթը ներկայացող հարկահանին, — նրան
անմիջապէս դուրս է հարկաւոր:

Այդ վերջիշեալ բոլոր դեպքերում, բայց
մասնաւոր երբ մի քանի այդ տեսակ
հանգամանքները բարդվում են, միաժամա-
նակ են ներկայանում — գիւղացին, ինչքան
էլ բնականապէս խելօք լինել, այլ ևս չէ
կարող երկար հաշել, հեռատեսութեամբ
կարգադրել իր տնտեսական ապագան:
Այդտեղ արդէն անտեղի է դատողու-
թիւն անել գիւղացու խելօքութեան
կամ տիմարութեան մասին... Գիւղա-
ցուն այսպէս թէ այնպէս փող է հարկա-
ւոր և նա հանգամանքներից ներկաձ,
կարօտութիւնից ստիպված՝ կամ ծախում
է իրան համար նոյն իսկ անհրաժեշտ
բերքը, եթէ բերք ունի և գնող կայ, կամ
ծախում է իր մի որ և է համադրեցողի
չարելին, հարստահարողին՝ նոյն իսկ իր
բերքի ապագայ հոնձը: Այդ տեսակ քայլի
հետեւանքը պարզ է. նա ահագին տոկոս-
ներ կը վճարի տարուց տարի իր մի ան-
գամ փոխ առած գումարի, կամ բնական
բերքի փոխարէն, և այլ ևս երբեք չի
դուրս գալ պարտքի տակից:

Գիւղացին արդիւնաբերում է ցորեն և
դարձի: չըմարում է, նա այնքան տիմար
չէ որ չը հասկանայ, որ իր ամբողջ տարե-
կան բերքը նա չը պէտք է ծախի, նա
հասկանում է որ ցորենի մի յայտնի մասը,
գիցուց 10—15 պուդ մարդապէտ, նրան
հարկաւոր է պահել տարեկան դործածու-
թեան համար, նա դիմ է որ ցորենի և
դարձի մի յայտնի քանակութիւն նա
պէտք է պահի եկող տարվայ նոր ցանք-
ներ անելու համար: Նա դիմ է նմանապէս
որ ցորենի մի յայտնի քանակութիւն առն-

այդ թշուառ աղբը, հեղինակի մարդասիրական
զգացմանց զգուշանքը թեւադրում են նրան առ-
նել գնչուներին իր պաշտպանութեան գրէլ հովա-
նիի տակ, չը նայելով որ մի տեղ իր գրքում խո-
սում է թէ՛ «գիւղատէրութիւն չունէ գրէլ գնչու-
ների ապօրգիւն»:

— Առհասարակ, դրում է պ. Պատկանանի, —
գնչուներին վերագրում են ամենայն տեսակ պա-
կաստութիւններ, մոլութիւններ, առանց ուշադրու-
թիւն դարձնելու նրանց կեանքի պայմանների
վրա: Վերջին ժամանակներում սակայն գնչուների
կացութեանը մօտ ծանօթ մարդիկ և գլխաւորա-
պէս անդլիսիցի զբաղեցները, որը ուսումնասիրել
են այդ ցեղը՝ իր կենցաղաւարտութեան ամենայն
տեսակ պայմաններին մէջ, սկսել են վերաբերվել
գնչուներին պակասութիւններին առելի մարդասի-
րաբար, համոզվելով այն համարութեան մէջ, որ
հանգամանքների փոփոխման և նվազեցման միջոց-
ների բարդութեան հետ բարձրանում է և գնչու-
նի բարոյական մակերևութը: Գնչուներին պատ-
կանեալ մարդկեանց մեծ մասը ուղիղ հետեւանք
է նրանց անելը աղբաւորութեան, նրանց բնածին
անհոգութեան, թեթեամտութեան և աստանդա-
կան կեանքի պայմանների: Գնչուներ չէ հետա-
մառում մեծ բաների, չէ հետաւորում հարստութեան
և ճոխութեան: Նա խալում է, դուրսնում է, նրա
կինը դաշակում է, ողորմութիւն է հայցում մի-
միայն համապարտեցան կտոր հացի համար: Նա
իր ինքնախոս աղաւաղութիւնը իր անիւնը շար-
մոլութիւնը ամենայն տեսակ բարօրութիւնից
վր է դառնում: Նրա այդ բնածին ճշգրտում գէյի
աղաւաղութիւն մեկնում է ոչ այնքան նրա դարե-
ւոր թափառական կեանքով ստիպական անապատ-
ներում, որքան նրանով թէ՛ երբեք հասու չէ և-
ղի նա քաղաքական բարեկարգութեան օգուտնե-
րի ըմբռնանքը: Այս դրութեան մէջ նա յայտն-
վում է քաղաքակրթութեան հանդիմադրում է բնակաց
ընդհանուր աստեղութեանը, արհամարհանքին և

վիւր է երկրի զօրքի համար, դիմ է որ
զօրքի ձիերի համար իւրաքանչիւր տարի
դարի է առնվում, բայց թէ որքանի է
հասնում երկրի ներքին դործածութեան
ընդհանուր պահանջը, — գիւղացին այդ չը
գիտէ և չէ էլ կարող իմանալ:

Գիւղացուց կարելի էր պահանջել միմի-
այն այսքան հեռատեսութիւն, որ նա հա-
շիւ անէր և պահէր այնքան ցորեն և դա-
րձի, որքան իր և իր ընտանիքի սեփական
տնտեսութեան և եկող տարվայ ցանքների
համար է հարկաւոր, — իսկ աւելորդը
ծախէր, ով և լինի առնողը... Այդքան
խելօք ունենալ գիւղացին կարող է, այդ-
քան հաշել նա դիմէ: Բայց հարցը դրա-
նում է՝ արդեք խելօք, հաշիւը մի բանին
պէտք են դալիս, երբ անհնար տնտեսա-
կան հանգամանքները ներդում են մարդուն,
երբ նա իր անելքն անում է ոչ թէ
հանգիստ, մոռած՝ դատողութեան, հե-
ռատես, սառ հաշիւների վրա հիմնվելով,
այլ հարկադրված, հարկից ստիպված:

Այդ է պատճառը, որ երբ մենք տես-
նում ենք թէ մի երկրի, որ անցեալ տա-
րիներում գրեթէ երբեք չէ արտահանել
ցորեն ուրիշ երկիրներ, յանկարծ մի
տարվայ մէջ արտահանում է մի ահագին,
չեղած, հրէշաւոր քանակութիւն, — մեղ ու
մեղ սկսում հետեւալ հարցն ենք առա-
ջարկում: արդեք մի տարվայ ընթացքում
այդքան միլիոն պուդ ցորեն և դարձի ար-
տահանելով Անդրկովկասից՝ մեր գիւղական
տարրը իր արդիւնաբերած բերքի ամէլ որդն
է արտահանել, թէ իր ներքին սեփա-
կան դործածութեան համար անհրաժեշտ
էլ, կամ, դուք անհրաժեշտի մի մաս...

Իսկ եթէ ապագան ցոյց կը տայ որ այդ
վերջին երկարութեան է ուղիղ, այսին-
քին որ մեր գիւղացին, — ասեմք անհեռա-
տեսութեամբ թէ հարկադրված — ծախել է
իր համար անհրաժեշտ բերքի մի մասը,

ցամաքը, իսկ տէրութեանց կողմից՝ դաժան հա-
լածանքներին, ստիպանութեան ծնւածնը և պա-
տուհանքներին: Գէյի իրան ուղղած այդպիսի ընդ-
հանուր և համախառն հալածանքների առաջ,
գնչուներ առելի սերտ կապերով և կապվում իւրա-
քինների հետ, սովորում է առելի աստիկ առել իր
հալածողներին և սկսում է հեռի բնակաց կեան-
քից վարել առանձին կեանք: Այդ առանձնայա-
կութեան շնորհով միայն նա պահպանում է իր
աղգայնութիւնը, որը արտաշնչվում է ոչ այն-
քան նրա կրօնից ու լեզուից, որքան նրա բարք
ու վարքից: — Եթէ ընդել արդարեւ — ասում է զըն-
չուների կեանքը ուսումնասիրող մի ուսուցիչ —
մարդկանցից գնչուների կրած ամեն աղէտներն և
նախատանքը, այն մարդկանցից, որը այնքան խը-
րոխտանում են իրանց քաղաքակրթութեամբ,
ուսմամբ, սիրով և հաշտութեան ոգով յանուն
որոնց հարկաւորներով տանում զգում էին այս
ողորմելի ցեղը խարդիկներ, ամբողջ տանեալ հա-
լածողներով խորատուրում էին ամենաամբողջ և
դաժանապատ ստրկութեան մէջ, վերջին ա-
ռաւան կապած վաղերից դալանքների պէս՝ քը-
չում տանում էին նրանց չուկաները վաճառելու.
լաժանկութիւն երեխաներին իրանց ծնողներից, դրդե-
լով նրանց վրա չնրկին, ծալալով, երբ տեսնում
էին նրանց վերքերից հատող արիւնի հեղեղանե-
րը. եթէ մոռանք, ասում եմ, այն խայտառա-
կութիւնները, որոնցով հասարակութիւններն ա-
րատաւորում էին գնչուներին, անուանելով նրանց
անիծեալ աղբ, հասկանալի կը լինի թէ՛ ինչու
նրանք հաշակաւոր ցիլիկիւղացիային հասուցանում
էին իրանց լիւրի արհամարհանքը, խուսափում էին
ամեն մի հաստատարեալ մարդու ընկերութիւնի:
Հասկանալի է միանգամայն, որ Ասիայի խորքե-
րից դուրս եկած կիսաւայրենի ցեղը, զգալով մի
և նոյն ժամանակ իր դրադանցութիւնը ուրիշնե-
րի վրա, ինչու չը կարողանա միանգամայն հալա-
տակվել Եւրօպայում միջնադարեան մղերի յուզ-
մանց արգասիք կարող ու կանոններին, այն յուզ-

կամ տեղ տեղ մինչև անդամ իրան համար անհրաժեշտ բերքը ամբողջ քանակով չի ներկայացնում, ի հարկէ դրա հետևանքը շատ ար- խուր կը լինի, մի և նոյն է՝ ծախսած, զի- ղից և զիւղացու ձեռքից դուրս եկած ցո- լեմն ու գարին գնացել արտահանվել է ամբողջութեամբ արտահանման, թէ մի- սամբ, դուրս է և մեծ քանակութեամբ միա- ցել է կապիտալիստի, չարչիի ամբարնե- րում դարձած:

Հետևանքը զիւղացու համար նոյն կը լինի թանկութիւն և անհրաժեշտութիւն կրկին դիմելու ծանր, ձնոդ, անտանկի փոխառութեան...

«Մշակի» № 7-ի մէջ տպւած առաջնոր- դողը մենք վերջացրինք հետեւեալ նախա- դասութեամբ: «Միայն այն ժամանակ վըս- տահութեամբ կարելի կը լինի ասել թէ մեր երկրի ցորենի (և կաւկասցիները զարու) արդիւնաբերութիւնը մեզ համար շահա- ւետ արտահանութեան և հարստութեան մի նոր ճիւղ կը համարուի, երբ ճշգու- թեամբ կը որոշվի այդ բերքի վերաբեր- մամբ մեր երկրի արդիւնաբերութեան ոյ- ժը, այսինքն կը որոշվի թէ ո՞ր չափով երկրի համար անհրաժեշտ է պահել ցո- լեմն նոյն իսկ երկրի ներքին զործածու- թեան համար, իսկ այդ քանակութիւնը դուրս արդիւնաբերութեան աւելորդը միայն կը ներկայացնի տարեկան արտահանութեան երկրի իսկական կարողութիւնը»:

Այժմ կարելի է ասել որ այս տարվայ կատարվածը կատարվել է, եղածը եղել է, բայց ապագայում տարուց տարի որոշելու համար թէ երկրի բերքը ո՞ր չափով և քա- նակութեամբ, որպէս արդիւնաբերութեան աւելորդը, կարող է նշանակված լինել ար- տահանութեան համար, առանց քննադա- երկրի ներքին սպառման պէտքերին, դա- մեր կարծիքով, թէ մասնաւոր ուսումնական անհատները ոյժերից վեր է, և թէ վեր է մի որ և է ուսումնական ընկերութեան ոյժերից, ինչպէս է, օրինակ, մեր Գիւղա- ստեանական կովկասեան ընկերութիւնը:

Այդ տեսակ գործ, մեր կարծիքով ինչ- պէս և յոյս ունենք մի այլ անգամ պար- զելու, իւրաքանչիւր ինքն աճանաչ զիւ- ղական համայնքի գործն է:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Ղաղարոս քահանայ Գլխեփեան ինդրում է մեզ տպել հետեւեալը: «Այն յարկելի անձանց, ո- ռոնց մօտ գտնվում են «Գնար Մանկական» եր- ղարանի բաժանորդագրութեան թերթիկները, խո- նարհարար ինդրում եմ, որ բաժանորդներին հետ միասին թերթիկները բարեհաճին ինձ շնորհով վե- ռադարձնել, որպէս զի խրաբանչիւր բաժանորդ յի- չեալ երգարանը իր ժամանակին կարողանայ ըս- տանալ: «Գնար Մանկական» երգարանի հրատա- րակութիւնը թէպէտ և այլ և այլ պատճառներով ուշացաւ, սակայն ամսիս 18-ից հաստատ լու- ռենեմ, որ գրքերը արդէն տպագրված և ճանա- պարհ են ձգված, ուրեմն մի քանի շաբաթից յի- տոյ այստեղ կը ստացվեն: «Գնար Մանկական» բոլոր երգերը ձայնագրված են եւրօպական նո- տաներով և յարմարեցրած են դաշնամուրի վրա նուագելուն, որի խրաբանչիւր մի օրինակի գինն է 2 ռուբլի իմ հասցէս է թիֆլիս, Հաւաքար, Ղաղարոս քահանայ Գլխեփեան»:

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են «Մեր քաղաքում գտնվում են մի քանի անձանց մօտ կեղծ քսան և հինգ ռուբլիանոց թղթադրամներ, որի համար, ինչպէս լուրում է, բանտարկված են արդէն մի քանի անձինք»:

Մեզ գրում են ՆՈՐ-ԲԱՅԱՋԵՏԻՑ, որ ամբողջ դաւաճող ծածկված է սաստիկ ձիւնով, այնպէս որ զիւղերի մէջ երթնելովները այժմ չառ դը- ժուարացել է:

Ամսիս 12-ին, ինչպէս մեզ գրում են ՆՈՐ-ԲԱ- ՅԱՋԵՏԻՑ, տեղի է ունեցել այդտեղ երկու բնա- նիքների մէջ սաստիկ կռիւ, մի ինչ որ ընկերա- կան հանգիստ պատճառով: Կռիւը այն աստիճան էր տաստկացել, որ կռուողները մինիս վիրաւորել են գլխին, իսկ մի ուրիշին էլ ուղեցել են խա- չալով խիկ, որը բաղդի բերմամբ միայն անվնաս է մնացել:

Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը յայտնում է որ այսօր, երեքշաբթի, յունվարի 27-ին, երեկոյեան 7 1/2 ժամին, լինելու է ընկե- րութեան հերթական ընդհանուր ժողովը: Պա-

աղկապ պատիւը պիտի լինի միանգամայն անա- րատ, կեղծ հաւատարմութիւնը անասան, և զըն- չուհին մինչ ի մահ պիտի մնայ իր ամուսնուն հաւատարմի և նրա յարածած ընկերակից (Ro- chos, 285): Գնչու մայրը, ասում է Bortow (296), իր աղկապ մանկական վաղադրոյն օրերում անդու- կրկնում է, իսկական Ղարին (սեր, այսինքն գնչու- հին), աշխարհիս երկսին միայն մի քանից վախ պի- տի ունենայ, այն է՝ իր լաւ իր կորուստից, որի հետ համեմատելով մարդուս կեանքից զրկվելը բոլոր- լին մի ճիւղն բան է... Մաքրել պահէ այդ, աղ- ջիկա, իսկ այժմ առ, կեր հացը ու գնա. տես արդեօք կարող եմ մի բան գտնուալ...

Եւրօպական գնչուների լեզուն բարձր ու վարձը բազմակողմանի հետազոտութեանը և երկակրու- թեանը նիւթ են եղել և յօդուում են մի ամբողջ գրականութիւն այդ վերին աստիճանի հետաքրքրի աղբի առիթով: Այլ գրութեան մէջ են գտնվում ասիական գնչուները: Սակաւթիւն են այնպիսի ճանապարհորդներ, որք այցելած լինեն Ասիայում և բնակեցեալ գնչուներին: Այս ճանապարհորդներն էլ բաւականապէս են իրանց գրութեանց մէջ մի քանի նախադասութիւններով պատճառած գնչուներ- ի նկատմամբ: Բայց եթէ առհասարակ սակաւ- են գրականութիւնում ասիական գնչուների վրա տեղեկութիւններ, սակայն նրանց մի մասը և այն է անգլիկոսական գնչուները վերաբերու- թեամբ տեղեկութիւններն աւելի են աղքատ են: Անգլիկոսական գնչուների կաց ու նստի, նրանց բարձր է և նրանց բնակութեան վայրերի վերա- բերութեամբ հազիւ թէ գրականութիւնում կեր և ինչ հարց լինի յարցուցված: Գնչի ինձ, ասում է պ. Պատկանեան, չէ պատահել տեսնել մի որ և է նշոյնաւոր յօդուած այս նիւթով: Պատահմամբ ձեռք բերած բոլա ցիդի (Թուրքիայում և արեւ- մուտան Անգլիկոսական ապրող գնչուները) բա- ուերի ցուցակը հարկադրեց ինձ ծանօթանալ գնչու- չուների առիթով լոյս տեսած երկասիրութեանց հետ իմ ուսումնասիրութիւնս գտնութիւն սոսա-

րապմանց առարկաներն են. 1) Ընթացող գործե- րը. պետական կառուածները մինիստրի լիազօրի յայտարարութիւնը թիֆլիսում մի շերամապահա- կան կայարան հիմնելու մասին. 2) Լու. Պ. Պրոցէնկօի զեկուցումը «Անգլիկոսական շերա- մապահութեան» մասին. 3) Պ. Լ. Էրիսէի զեկու- ցումը շերամապահութեան դրութեան մասին 1886 թվին: Ժողովին կարող են ներկայ գտնվել և կողմնակի անձինք:

ԲԱՂՈՒԹԻՑ մեզ գրում են, որ այդտեղի երկու- ղարդներում դաստաւութիւնը արդէն սկսվել է ամսիս 14-ից: Օրիորդաց բաժանմունքը զետեղ- ված է իր նախկին տեղում, իսկ տղայոց բաժան- մունքը առժամանակ գտնվում է պ. Աղամեանցի նոր բնակարանում, որտեղից շուտով պիտի տե- ղափոխվի նախկին շինութեան մէջ, որի մի քա- նի սենեակները պիտի նորոգվեն: Գուցէ մինչև յունվարի վերջը այդ դիտաւորութիւնն իրագործ- վի:

Մեզ գրում են ԲԱՂՈՒԹԻՑ հետեւեալը: «Բաղաւթու- միս սաստիկ տարածված են դանդաղ տարափո- խիկ հիւանդութիւններ, ինչպէս օրինակ՝ բկացաւ, սկարլաթնա և ծաղիկ, որոնք բաւական դժեւր են տանում մահուկներից: Քաղաքային վարչու- թիւնը միջոցների է դիմում այդ հիւանդութիւն- ներին առաջն առնելու. որոշված է, օրինակ, որ քաղաքային բժշկը պէտք է ամիս շաբաթ այն- լէ քաղաքիս բոլոր զարդներին, որպէս զի թէ աշակերտները չը վարակվեն տարափոխիկ ախ- տերով, և թէ նրանց միջնորդութեամբ հիւանդու- թիւնները աւելի չը տարածվեն քաղաքի մէջ»:

Պօլսեց մեզ գրում են, որ ՄՈՒՇԻ մէջ ձերբա- կալկեցաւ Միացեալ ընկերութիւնների Հայաստա- նի վարժարանների ընդհանուր տեսուչ՝ Մկրտիչ Մարեան: Գրանից մի քանի օր առաջ արդէն ձերբակալված է եղել նոյն ընկերութեան ուսում- նարանների փոխ-տեսուչ Մարկոս Նաթանեան: Կարինի մէջ այդ մասին քննութիւն պէտք է լի- նի:

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են «Այս օրերս Նոր-Նախիջեանի մէջ հետեւեալ տիպարի զէպը պատահեց: Բոստով քաղաքի մի հարուստ հայ վա- ճառականի կինը ծնեց մի թոյլ, եօթնամեայ տղայ: Որովհետեւ Բոստովում հայոց եկեղեցի չը կայ և տղայի առողջակազմ չը լինելու պատճա-

ցաւ մասամբ եւրօպական գնչուների նկատմամբ, բայց անգլիկոսական գնչուների բարբառի վե- րաբերութեամբ եւ բոլորովին չը գտայ մի որ և է տեղեկութիւն: Կովկասի զանապաւն տեղեկա- գրութիւններում են պատահել եւ մի քանի հատ- վածական ծանօթութեանց հետ այս պղպտիւրը նախաջ բարձր ու վարձի վրա, բայց թէ այն խն- զրի լուծումն, որ անգլիկոսական բօշաւան եւր- ու զարաչին եւր համաեւա աղբ լինէին եւրօ- պական գնչուների հետ, ինձ չը յաջողվեց գտնել տպագրական աղբիւրներում...

Ե. Գ. Վէլդենտում պարտաւորապէս հաղորդել է մեր յարգելի գիտնականին իր կազմած փոքրիկ ձեռագիրը, որի մէջ ժողովում է այն ամենը, ինչ որ յայտնի է Անգլիկոսական գնչուների վրա: Տեղի սղութեան պատճառով մենք բաց ենք թողնում այստեղ այն հետաքրքրի տեղեկութիւն- ները, որոնց պրօֆէսորը առաջ է բերում պ. Վէլ- ղենտումի ձեռագրից: Գալով բօշաւների բարբա- ու հետազոտութեանը, մեր հեղինակը դիմում է հետեւեալ չորս բառացուցակներին: Առաջին ցու- ցակ՝ Ներսէս Մարգարեանի տ. Տեղեկագրութիւնը ի փոքր և ի Մեծ էայս եր. 81—82, երկրորդ ցու- ցակ՝ 100 բառի և 13 նախադասութեան, կաղ- մեալ վարժապետ Խաչկիմովից, երրորդ ցուցակ՝ Պատկանի գրքից «Etude sur les Tchinghianes ou Bohemiens de l'Empire Ottoman» և չորրորդ՝ Կ. Խաչկիմովիցի և Աղաբէի Ամիրանի ցուցակը, որ բովանդակում է իր մէջ 150 բառ և 35 կարճա- ուստ նախադասութիւններ:

Այս այդ աղբիւրներից առած բառերի համե- մատութիւնը և ծանօթութիւնները պ. Պատկա- նեանին հետեւեալ կարկաչանութեան են բերում:

1) Բօշաւների լեզուն գնչուների իսկական բար- բառն է և ոչ այլ սղագնչութեան, որ իր արտու- ղին ձևերով և կենցաղավարութեամբ նման լինելը գնչուներին:

2) Բօշաւների բառերը կէսի չափ յատուկ են նրանց բարբառին, կէսի չափ ընդհանուր են նը-

ռալ՝ ծնողները վճռել էին երեխային տանը մկրտել: Բայց ծնողներին համոզում են տանել երեխային Նոր-Նախիջեան և այստեղ հայոց եկեղեցում մկր- տել նրան: Գալիս են եկեղեցի, բայց տաք ջուր չը կայ, որպէս զի սառ ջրի մէջ ածեն, այլ մկր- տելու ժամանակ երեխային ընկղմում են սառ- ջրի մէջ: Անմիջապէս թուլակազմ երեխան մու- նում է: Մայրը դարդից հիւանդացել է»:

Համալսարանական տօնախմբութիւնները ԹԻՖ- ԼԻՍՈՒՄ վերջին ժամանակները սովորական են դառնում: Մօակվայի և Խարկովի համալսարաննե- ռի ուսանողներից յետոյ, այժմ էլ Պետերբուրգի համալսարանի նախկին ուսանողները պատրաստ- վում են փետրվարի 8-ին մի խնջուքով տօնել ի- րանց alma mater-ի տարեդարձը:

Պ. Ղ. Արեւանից յետոյ, այժմ թիֆլիսի Ներ- սիսեան դարանոցի տեսչի պաշտօնը վարում է պ. Գ. Արեւան:

Յունվարի 23-ին, կէսօրից յետոյ, թիֆլիսի ա- ուսչին զինապալայի ուսուցիչ Ծօստէ, անձնա- սպանութիւն գործեց արքանապետի: Հանգուցեալը թողել է մի քանի նամակներ և մի տոմարի, ինչ- պէս հաղորդում է «Нов Обозр.» լրագիրը, որով խնդրում է ոչօրէ չը մեղադրել իր անձնասպանու- թեան մէջ:

Պետերբուրգի «Новое Время» լրագիրը լսել է, որ անցեալ տարվայ ընթացքում զրուգաւոր թղթ- թերի և մարկաների վաճառումից դանձարանը ստացել է 16,437,446 ռուբլի եկամուտ:

«Вестникъ Европы» ամսագրի այս տարվայ առաջին, յունվարի համարը շատ հետաքրքրի մէջ իր բովանդակութեամբ: Նախ այդ տետրակի մէջ կայ դարձեալ Շչեդրինի մի պատկեր «Портретъ Гривша» վերնագրով: Այս անգամ Շչեդրինի պատկերը վերցրած է ոչ թէ զիւղական, այլ քա- ղաքային ուսուց կեանքից և իր թէ և գեղեցիկ բովանդակութեամբ շատ տիպարի տպագրութիւն է թողնում ընկերցողի վրա: Նոյն տետրակի մէջ իրանց վրա ուշադրութիւն են դարձնում «Бук- вина и Русины» յօդուածը, և նոյնպէս «Երեքին տեսութեան» բաժինը: Այնուհետեւ ամսագրի այդ տետրակի մէջ տպված է խաչկական լեզուից թարգմանած «Недда» վէպը: Առհասարակ տեա- րակը շատ լաւ է կազմված:

Բանց և եւրօպական գնչուների մէջ:

3) Չէ նշմարվում, որ բօշաւների լեզուի վրա աղբեղութիւն ունեցած լինէին եւրօպական գնչու- ների բարբառները:

4) Բօշաւների ցեղին կարելի է առայժմ համա- թելու Անգլիկոսական յայտնի տեղեկութիւն, Թուրքիա- յում և Էրզրումի և Տոկատի գաւառներում բնա- կեցեալ գնչուներին. աւելի ձիւտ որոշել նրանց բնակութեան վայրերը անկարելի է տեղեկութիւն- ների սակաւութեանց պատճառով:

5) Բօշաւների կենցաղավարութիւնը և պարագ- մունքը Անգլիկոսական և Թուրքիայում նոյն է, ինչ որ են Բալկանեան թերակղզու վրա:

Բօշաւները անուանում են իրանց լօմ, ուրեմն՝ որպէս և եւրօպական գնչուները անուանում են իրանց լօմ: Այդպիսի Բի փոփոխումն Լի վրա փոքր Ասիայի գնչուների մէջ նկատվում է շատ բաւերում:

Ղարաչին և Երի բարբառը հետազոտելու հա- մար հարկաւոր նիւթերը աւելի պակաս են, քան թէ բօշաւներին, բայց սակայն առհետեւ ունեցած աղբիւրները, որոնց մի պատկաւելի հեղինակը մի առ մի անուանում է, թոյլ են տալի նրան ասելու. «այսպէս ամենայն յայտնի հանգամանք- ներին չէ հակառուտ այն հղրակացութիւնը թէ՛ եւրօպական գնչու—բօմերը, փոքր Ասիայի բօ- շա—բօմերը և պարսից զարաչի—բօմերը մի և նոյն աղբն է, որ պատմական պատճառներով մի քանի խմբեր վրա բաժանվել, կամ ի վաղուց հետէ պահպանել է իր Խարբառների մէջ դիպելե- տական առանձնապատկերիւններ»:

Վերջացնելով մեր այս յօդուածը, բանասէր ըն- թերցողների ուշադրութիւնը դարձնում ենք այդ երկասիրութեան վրա: Տեղի սղութեան պատ- ճառով մենք անկարող ենք մի առ մի առաջ բե- ռել այն ամեն հետաքրքրի տեղեկութիւնները, որք այնքան առատ սխալված են պատկաւելի հեղինա- կի զրքի բոլոր 146 երեւմունքում...

Միակամ

10հոկտեմբեր, 24 յունիսարի: Ֆէրդինանտ համայնք-
ների ժողովում պատասխանելով Կրէմլին, որը
առաջարկում է յետ քաշվել եղկպոսոսից,—ասեց, որ
պետութիւնները հրաժարւում են այդ առիթով
Անգլիայի վրա ճնշում դրծելու մտքից, իսկ Անգ-
լիան պարտաստ է ամենքեր կերպով պարտաւոր-
ւելու: Եղկպոսոսը և Սուէդի ջրանցքը չէզոք դը-
րութեան մէջ դնելու վերաբերութեամբ, բայց
Անգլիան յետ չի քաշվել եղկպոսոսից մինչև որ
հաստիդ չը հաստատվի նախատու կարգապահու-
թիւն:

Վիլհելմ, 24 յունվարի Դասլի ստատս-սեկրետարը, կարդինալ Եակօրինի, պապի Միսիսնդին ներկայացուցչին ուղղած իր հեռագրում այն միջոցն է անցկացնում, որ Վատիկանին հասնելի կը լինի, եթէ Գերմանիայի կաթօլիկ կուսակցութիւնը աջակցէր իշխան իխմանիս զորքի թիւը աւելցնելու խնդրումն Այդ ցանկութիւնը պայմանաւորվում է կրօնական և բարոյական տեսակէտերով խաղաղութեան պահպանութեան զործը յաղողութիւն կուսննայ, իսկ գերմանական կառավարութիւնը կը համաձայնվէր աւելի բարոյքելու Գերմանական կաթօլիկ եկեղեցիները դրութիւնը, և ի միջի պաշտ, կը հակվէր՝ մայիսեան օրէնքների վերաքննմանն կողմէ:

ՎԻԷՆՆԱ, 24 յունվարի: Ամբողջ Աւստրո-Ունգարիայից արտասահման ձիեր դուրս տանելը արգելվեցաւ:

ԲԵՐԼԻՆ¹⁶, 24 յունվարի 2 շրտարակիցացու կայ-
սերական հրաման, որով կարգադրվում է հաաբե-
լու պահեստի հետևակ 68.000 զինւորներին և
պահեստի հրացանաձիգ զորամւրի 4.800 զինւոր-
ներին, և սովորեցնելու զրանց մազաղինային հը-
սկաններ կրակելը՝ Այդ վարժողութիւնները կը
սկսվան յունվարի 26-ից և կը վերջանան փետր-
վարի 6-ին:

10հոկտեմբեր, 24 յունվարի Եղիպտոսից թե՛ անյապաղ է թե՛ որոշ ժամանակից յետոյ յետ քաշվելու մասին եղած բոլոր առաջարկութիւնները, մերժվեցան համայնքներէ ժողովի կողմէն ձայներէ ահալին առաւելութեամբ:

Աթէնք, 24 յունվարի: Նոր զինւորների հաւա-
քելը յետաձգված է մինչև յունիս:

ՎԻԵՆՆԱ, 24 յունվարի: Մյնիստր Յիվայկով-սկի, որը փոխադրնում էր՝ հիանալիման պատ-
ճառով բացակայ եղող մյնիստր-նախագահին,
պատգամաւորների ժողովում յայտարարեց, որ
Աւստրո-վնգարիայի յարաբերութիւնները զէպի
բոլոր պետութիւնները՝ զոչացուցիչ են. խաղա-
ղութեանը սպաւնացող ոչինչ փոխադրութիւններ
չեն եղել. բոլոր կառավարութիւնները, մանա-

անդդ կայսերական կառավարութիւնը, խաղաղութիւն են ցանկանում. և եթէ ձեռք են առնելու՝ պատերազմական որ և իցէ միջոցներ, այդ էլ մի-միայն նախազգուշութեան համար:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Յուլիանի 26-ին

Առնագայ 1 րուբլ [ծոցանի վրա արժէ	219 ⁹ / ₁₆	պէնս.
— — — — —	183 ³ / ₄	պֆ.
— — — — —	228	սոն.
Ոսկի — — — — —	9	11 ֆ.
Մարտային կուպոններ — — — — —	176	50
Աքսաթ — — — — —	1	44
Բորսային դիսկոնտներ — — — — —	51 ⁴ / ₈	և (12 ¹⁰ / ₁₀)
Պետակ. բանկ. 5/10 տոմս 1-ին շրջանի	100	—
— — — — —	99	37
— — — — —	98	87
— — — — —	99	37
— — — — —	99	—
— — — — —	99	—
Արեւելեան 50/0 փոխառութ. 1-ին շրջ.	97	75
— — — — —	97	75
— — — — —	97	75
Եւրլըն 50/0 առաջին փոխառութ.	235	—
— — — — —	227	—
51 ⁵ / ₁₀ րէնտա	103	25
Ոսկեայ րէնտա	186	50
Եւր կոնսոլիդատ փոխառութիւն	157	50
50/0 գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ.	157	—
51 ¹ / ₂ 10 գրաւական թղթեր Խեղաճնի կալուած, բանկի.	96	—
60/0 գրաւակ. թղ. Խաբկովի կալ. բան.	102	37
— — — — —	101	25
— — — — —	101	50
— — — — —	101	75
— — — — —	102	50
— — — — —	101	—
— — — — —	102	—
— — — — —	101	—
— — — — —	27 և 43 տ.	—
— — — — —	18 և 43 տ.	—
Վ. Օլոսկո-Կամսկի բանկի ակցիաները	553	—
Ռոսայ երկրաբուլճիների գլխաւ. ընկ.	268	75
Իրիշնակ-Վ. Օլոսկոյի ընկ.	96	—
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլյ-գաղութներ.	93	75
Սոսկլայի քաղաք. օբլյգացիաներ	95	25
Ոչէնայի	91	75
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ.	—	—
Եւր երկաթուղային բէնտա	97	37
Պետական բանկի 6-դ հրատարակ-կութեան տոմսերը	—	—
Գլխաւ. թղ. Ալշու. բանկի	99	—
Ս. Պետերբուրգի սուտաւի տրամադրութիւնը ֆոնդերի վերաբերմամբ ամսուր է, ակցիաների վե-րաբերմամբ թղթ է:		

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

3 U. 3 S U. r U. r n t t t t t t t t t t

ՖԻՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԵԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

(N. PAQUET ET COM.)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Զորիքշարժի, փետրվարի 4-ին, ԱՐՄԵՆԻԱ (ARMÈNIE) շոգենաւը, նաւապետ ՇԵՍԼՏ (SCHEULT) գլուխ կը զնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կօ Պօլիս և Մարսելլէ: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան ընթացակարներին: Բաթումում պ. Գարանիօնին և Թիքլիսում պ. Բէնիօն, նախկին Արժուոյնի գլխորդներ, № 103.

—3

16—100

16—100
 ВЫСОЧАЙШЕ Утвержденное Кавказское Товарищество торговли аптекарскими товарами
 в Тифлисе (Графская ул., против Музея).
 ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿՈՎԿԱՍՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԴԵՂԱՏԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՄԱՆ
 ԹԻՖԼԻՍՈՒՄ (Գրաֆիայա փողոց, Մուշէթի դիմաց):

[illegible]

ՄԻ Հայ ՕՐԻՈՐԴ, որ աւարտել է իր ուսումը Գայիանեան դպրոցում, ցանկանում է մասնաւոր աներում դասեր տալ: Հասցէն «ՄՇԱԿԻ» խմբադրատանը:

ԲԱՐՈՆ ՖՅՆ-ԿՈՒՂԵՆԲԱՆԻ
ԱՊԱԿՈՒ ԳՈՐԾԱՐԱՆԸ
Պատրաստում է ամենանոր սխառմայի
Լ Ա Մ Պ Ա Յ Ի Ա Պ Ա Կ Ի Ն Ե Ր
Նշանակէս և լամպայի ուրիշ պարագաները, էփանցրած գնիրով: Մանրամասնու-
թիւնները կարելի է իմանալ Սիմեոն և Գալսէ գործակալութեան գրասենեակի մէջ,
Թիֆլիսում:
5—10 (Լ. Դ.)

ՆՈՐ ԳԻՐԳ. (ՌՈՒՍԵՐԵՆ ԼԻԶՈՒՈՎ)
ՀՈՂԱՅԻՆ ԵՒ ԱՆՁՆԱԿԱՆ ԻՐԱՆՈՒՆԻՔԸ ՀԻՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ Ս. ԲԱՀԱԹՐԱՆԻ. 1
ԶՐՄԱՆ: ԳԵՂԸ 35 Կ: ԹԻՖԼԻՍԻ զԵՐԿԱԾԱՌԱՆՈՅՆԵՐՈՒԹՅՈՒՆ 10 ԱՆԵԼԻ ԱՌՆՈՂՆԵՐԻՆ 20%
ԳԵՂՈՒՄՆ ԿՐ ԼՐԻՐ ԿԼՆԱՐՈՆԱԿԱՆ զԵՐԿԱԾԱՌԱՆՈՅՆՈՒՆ
14—30

Բացելով Բազումայ մէջ ԳՐԱՎ ԱՃԱՌԱՆՈՅ, ընդունում ենք հայերէն գրքեր կամ լիտայով վաճառելու համար: Պայմանները որոշելը թողնում ենք հրատարակիչների և հեղինակների ազատ կամքին: Մեր հասցէն. Бабу. Книжный Магазинъ Тарасвхъ.

3—4

ՀԱՃՈՒԵԿՁԻՌ

Թ Ի Ֆ Լ Ի Ս Ի Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն Բ Ա Ն Կ Ա Յ Ի
 ԳՅԻՆ ԴԵԿՏԵՐԻ 1886

Պ Ա Հ Ա Ն Զ Ք	Թիֆլիսում	Բազուայ բաժն.	Ընդամենը	Պ Ա Ր Տ Ք	Թիֆլիսում	Բազուայ բաժն.	Ընդամենը
1. Դրամարկի (առձեռն թղթադրամ).....	53,188—23	12,095—62	65,283—85	1. Հինական դրամադրուս.....	1,000,000 —	— —	1,000,000 —
2. Ընթացիկ հաշիւ Պետական Բանկ. բաժնում.	223,145—48	180,000 —	403,145—48	2. Պահեստի դրամադրուս.....	145,031—46	— —	145,031—46
3. Զեղջումն (Disconto) մուրհակայ երկու ստո- րադրութեամբ.....	1,625,717—02	471,277—22	2,096,994—24	3. Արդիւնք 1885 թ. ի պահեստ... ..	131,233—08	— —	131,233—08
4. Զեղջումն տոկոսաբեր թղթերի, կարծնների և այլն.....	23,853—74	— —	23,853—74	4. Դրամական աւանդներ՝ ա) Պայմանաժամով.....	1,616,850 —	32,940 —	1,649,790 —
5. Փոխառութիւն դրաւականով՝ ա) Պետութիւնից ապահ. տոկոսաբ. թղթերի.	1,155,782—35	48,123 —	1,203,905—35	բ) ց'Պահանջ.....	399,582 —	20,400 —	419,982 —
բ) > ոչ ապահ. >	315,064 —	840 —	315,904 —	գ) Ընթացիկ հաշուով հասարակ.....	775,821—10	265,199—78	1,041,020—88
գ) > >	4,620 —	78,421 —	83,041 —	> > պայմանաւոր.....	— —	148,915—08	148,915—08
6. Բանկայի պատկանեայ տոկոսաբեր թղթեր.	193,419 57	6,270 54	199,690—11	5. Թղթակիցներ՝ ա) Նոցա հաշիւ (Loro).....	4,602,481—01	— —	4,602,481—01
7. Ոսկի և արծաթամանի փոխանակադրեր..	5,934—09	101 29	6,035—38	բ) Բանկայի հաշիւը (Nostro).....	4,872,776—20	— —	4,872,776—20
8. Թղթակիցներ՝ ա) Նոցա հաշիւ (Loro).....	4,786,861—35	— —	4,786,861—35	6. Բաժնի հաշիւը կենտրոնական վարչու- թիւն հետ.....	— —	766,532—36	766,532—36
բ) Բանկայի հաշիւ (Nostro).....	4,623,639—56	— —	4,623,639—56	կենտրոնական վարչութեան հաշիւը բաժ- նի հետ.....	471,264—97	— —	471,264—97
9. Բաժնի հաշիւը կենտրոն. վարչութեան հետ. կենտրոնական վարչութեան հաշիւը բաժնի հետ.....	770,548—21	— —	770,548—21	7. Բանկայի բաժնիտոմսերու անվճար կըտ- րմաների բաշիւը 1882, 1883 և 1884 թ.	575—60	— —	575—60
10. Բողոքուած մուրհակներ *).	449,366—24	— —	449,366—24	8. Զը վճարուած տոկոսներ, աւանդներու, ընթացիկ հաշիւներու և այլ դործողու- թիւնայ.....	75,102—89	8,182—99	83,285—88
11. Պայմանաժամը անցուցուած փոխառութիւն- ներ.....	11,130 —	— —	11,130 —	9. Ստացուած տոկոսներ և յանձնարարա- կաններ.....	144,434—39	36,372—48	180,806—87
12. Ընթացիկ ծախսեր.....	40,094—76	11,448—85	51,543—61	10. Փոխանցիկ գումարներ.....	67,556—14	1,075—99	68,632 13
13. Կահկարասիք և ակցիւնական ծախսեր.....	4,112—98	3,969—74	8,082—72				
14. Յետ ստացուելիք ծախսեր.....	16,231—26	406—45	16,637—71				
Ը. Ա.	14,302,708—84	1,279,618—68	15,582,327—52	Ը. Ա.	14,302,708—84	1,279,618—68	15,582,327—52

*) Բողոքուած մուրհակներից վիսամները, որոնք կարող են տեղի ունենալ, ծածկելու համար յատկացրած է առանձին զումար...

131,233-08